



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 41

Շ Ն Ո Ր Է Ն

Տ ՀՈԿՏԵՄԲԵՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ		ԳԱՌԱՌԱՅ ՀԱՄԱՐ		ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ	
Տարեկան	50 Ղր.	Տարեկան	54 Ղր.	Տարեկան	12 Ձր.
Վեցամսեայ	25 »	Վեցամսեայ	27 »	Վեցամսեայ	6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՑՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՑՆԵՐՈՒ, ՇՂԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեղուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը օրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները չեմօպէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹՐ՝ քե՛

Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրիշ եղամ յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին զոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:

Հասք 40 փարս

ԱՐՏՈՂԱՏԵՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(کتابخانه جهان) مطبعه سی — باب عالی جاده سی ۲۳

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի ճասէսի քիւ 23



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinineը կը պարունակէ զուտ մենդային մասերն եղան մսին, ուղեղին, ողնուղեղին և ֆոսֆաթներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոլիս նոր բերուած այս անզուգական կազդուրիչ դեղը, 27 տարիներէ ի վեր ծանօթ և գնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգղիոյ, Ճաբոնի և Զինու համաբաւոր բժիշկներէն. ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան ուժասպառութիւն, դակտիլի, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղախիտ, սկարութիւն, նիւրսութիւն, կուրծքի սկարութիւն, անարիւնութիւն և ընդհանուր անբարեկեցութիւն:

Անգամ մը դորժածութիւնը կը հաստատէ իւր անզուգական յատկութիւնը: Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐԲ, Պահճէ-գաբու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղօրէնց մթերանոցներու քով:



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/ւ 41

ՇԱԲԱԹ

8 Հոկտեմբեր 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ծնողական պատճառներով (Խմբագրական) . — ԲԵՐՈՒՋ ԶԱՏԻԿԱՆ : Խրատ
կցկուր , տղաս , տկանջ տուր . — ԹԷՈՂԻԿ : Մայրես հեռու (Ոսանաւոր) . — ՍՈԿՐԱՏ
ՍԱՐՐԱՑԵԱՆ : (Այս տողերը գրողը մոռցած ըլլալով յօդուածին վերնագիր մը դնել ,
օրհնեալ ըլլայ) . — ԵՐՈՒԱՆԴԻ ԹԹԼԱՅԵԱՆ : Իմ օրագիրս . — ՊԷԱԴՐԻՍ ՇԱՀԻՆԵԱՆ :
Արուեստասերի մը յուշեր . — ԱՇՈՏ ՄԱՏԱԹԵԱՆՑ : Բրոնիկ . — Վ. ՓԱՓԱԶԵԱՆ :
Զուարճալի խօսքեր . — Ե. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ : Մահերգ . — ԱՍՏԻՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ :
Շաբթուան յուշեր :

ԾՆՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ծնողներէ շատեր կը տրտնջան ու կը բողոքեն թէ՛ ինչո՞ւ չեն վայելեր իրենց
զաւակներէն այն յարգանքը , որով իրենք կը վերաբերուէին նախապէս իրենց
ծնողաց հանդէպ , ճշմարտ է թէ մեր ծնողներուն համար մեր ունեցած յար-
գալիւր վարմունքէն , և ակնածանք նիստ ու կացէն աստիճան մը զուրկ են ար-
դի զաւակները , խնդիրը ընտանեկան երջանկութեան հետ այնքան սերտ կա-
պակցութիւն ունի , որ կ'արժէ լրջօրէն մտածել անոր վրայ , ու քակել այն բո-
լոր հանգոյցները որոնք կ'սպառնան ընտանեկան յարկին անուշ ու բուրում-
նաւէտ մթնոլորտին :

Ժամանակի տեւուութիւնը որ մեր ծնողներուն ու մեր մէջ կը գտնուի՝ պէտք
էր որ մեծիակ տարբերութիւն մը դնէր մեր զաւակներու դաստիարակութեան
եղանակին մէջ , այսինքն թէ մեր ծնողաց հանդէպ ունեցած վարմունքնիս պէտք
չէ որ պահանջենք մեր զաւակներէն , ու մեր ծնողներէն սովորած վարուելու ե-
ղանակովնիս , պէտք չէ որ վարուինք մեր զաւակներուն հետ : Տարիներու շրջ-
թայումը և հոլովումը արդի զաւակներու մտքերը լեցուցած են գիտութեան ու
ուսմանքի բաւականաչափ պաշարով մը , ուրկէ զուրկ էինք մենք նախապէս

մեր պատանեկան հասակին մէջ : Մեր անկեղծութիւնը քիչ մըն ալ տառաջ տանելով խոստովանինք թէ՛ մեր յարգանքի ու ակնածանքի որակը զոր սովորաբար կը մատուցանէինք մեր ծնողներուն , և երբեմն նոյն իսկ մեր իրաւունքները , մեր արդարացի դիտողութիւնները դժացում գտնելու տեղ՝ իրր վարձատրութիւն՝ միայն կշտամբունքներ ու պարտանքեր և ամենաութաւր լուտանքներ կ'ընդունէինք :

Պէտք է դարձեալ խոստովանինք թէ՛ մեր ծնողները խիստ կոշտօրէն կը վարուէին մեր արժանապատուութեան հետ , մանաւանդ օտար հիւրերու առջև մեզ իբր սպասաւոր ծառայեցնելով անոնց , և սակայն ծնողական այս վարմունքը մեզի չէր վշտացներ , որովհետև նախ մենք պէտք եղածին չափ զարգացած չէինք , ու մեր մէջ արժանապատուութեան զգացումը դեռ այնքան արմատացած չէր :

Ծնողական անիրաւութիւնները նախ պատճառ կ'ըլլան՝ իրենց զաւակներուն ծնողական անաշուութեան և արդարադատութեան՝ նկատմամբ ունեցած հաւատքի հուաւորմին , որուն անմիջական հետեւանքը կ'ըլլայ յարգանքի պակտը : Ուրախալի է ըսել թէ , հիմակուան վարժարաններուն մէջ արդի զաւակները կը սովորին՝ ամէն բանէ վեր դասել արժանապատուութիւնը , ուղիղին ու արդարին բուն պաշտպանը ըլլալով հանդերձ , վեհանձնօրէն խոստովանիլ իրենց սխալներն ու թերութիւնները :

Հետեւաբար տրամաբանական այն լուրջ դիտողութիւնները ու խորհուրդները՝ զորս արդի զաւակները կ'ուզեն իրենց ծնողաց սխալ արարքներուն և ծուռ վարմունքներուն հանդէպ , պէտք չէ որ վիրաւորեն անոնց արժանապատուութիւնը , ու պէտք չէ որամտին անոնք իրենց զաւակներուն այս արարքին համար , որ ինքնին այնքան գնահատելի է ու յարգելի :

Արդի ծնողները՝ երբ կ'ուզեն որ իրենց ցաւերուն և ուրախութիւններուն մասնակից ընեն իրենց զաւակները , և նախապէս կազմած ընտանեկան բոյներնին սիրելի դարձնեն անոնց , իրենք՝ իրենց կարգին պէտք է որ յարգեն զանոնք , վեր բռնելով անոնց արժանապատուութիւնը , մանաւանդ օտարներու առջև , ու ուղիղ և արմատական դատարարակութիւն մը տան անոնց , խոստովանելով իրենց այն թերութիւնները՝ զորս մատնանշած էին իրենց զաւակները , ու պէս զի իրենք ալ իրենց կարգին լուրջ , օգտաշատ և փորձառու խրատներ լոյսին կարենան հա կեցնել զանոնք՝ անվայելուչ գարշելի վարմունքներէ , ու պէս զի լուրջ կերպով կարենան ըմբռնել տալ իրենց բոլոր ըսածները , ու կարենան վեր բռնել իրենց զաւակներուն հանդէպ ունեցած բարոյական ազդեցութիւնը : Այն տառն պիտի տեսնեն որ իրենց զաւակները առանց իրենցմէ խորհուրդ հարցնելու՝ ո՛ր և է բան չ'պիտի գործեն , ու հրաւիրուող զաւակներ պիտի դառնան , իրենց հանդէպ ծնողավայել ու պատշաճ յարգանքով մը պիտի վերաբերուին :

ԲԵՐՈՒՉ ԶԱՏԻԿԵԱՆ

ԽՐԱՏՔ ԿՑԿՏՈՒՐ,

ՏՂԱՍՍ՝ ԱԿԱՆՋ ՏՈՒՐ

(ՅԱՆԹԷՋԻ)

Հոկտեմբեր եօրը : Է՛հ , անցեր է ամառ-
ուան օրը , ու ցնդեր՝ ծաղիկներուն հոսը :
Հովը կ'երգէ կոր բնութեան բոքը , ցուցուց
ինձիմէն ձմեռուան օդը . օձիքին հետ դար-
ձուց ամեն մարդ տաքասին տոք :

×

Օ՛հ , տառ , նստիմ կրակին մօտ . բե՛ր
բուրբ , մեխն ու կոքը , որ սկսիմ գրչիս
յանգամով նօքը , շիտկելու փորձով . . .
բարեբերուդ փոքր :

* * *

Ուր մնացողին յանկերգն է « Ե՛հ » ը ,
եւ բերացողին միջոցն է սուտ : Խօսինք բե-
լը կը ձգէ մութը՝ ով որ գործածէ կեանքի տեղ
բութը : Վարդին փութին պէս , ո՛վ որ վա-
յելէ մեղաբանութիւն , պէտք է որ կըլլէ ա-
նոր հետ կուտ :

×

Կեանքին ծովակն ունի իր խութը , գիտ-
ցիւր ուրեմն շահուզեցիկ եղբւմուտ . ինք
գանձելու համար՝ ցնծալու եւ ուրբ : Ուստի
գործիկ պահուն մտածէ միայն խանութը ,
հեծիկ ալ պահուն՝ քաղաքաւայն տը :

×

Թու աղջիկներ ծամեն լղճուկ ձութը ,
դուն գնասն նէ խմէ գինիին զուտ , մինչեւ
իր վերջին անուշիկ պուտ :

×

Ջղային տարուրթին կոչեցին զուրբ , ուս-
տի մի՛ տար ամենուն գրպանիկ կուտ :

* * *

Դիտէ՛ , կեղծիքի հակամէտ՝ շան պէս
կծկած ունի իր ձեռք . անոր համար մի՛
տեսնուիր հետք՝ անոր որ տեսին մէջ կը կրէ
խեղք :

×

Դեռ տալ ես , յարգէ՛ դպրոցիկ պէտք ,
իր խրատներէն նետէ՛ միայն անպէտք :

×

Ամենդի մ'արձակեր խօսեցուդ նետք ,
վերջէն յոռի կը մեկնէ տգէտք :

×

Կօշիկդ չի հանած՝ մի նետուիր գետք .
ողջմտութիւնն քեզ գանկիկ աշալուրջ դէտք .
աղջիկ առնելէ առաջ հարցո՛ւր փնտռէ՛ ա-
նոր նետք , եւ պատասխանելիկ առաջ բնէ՛
խօսիկդ ամեն մէկ մէտք :

* * *

Թափանցող եղիր , լսելով « այդ » ը՝ իս-
կոյն մ'ըմբռներ . . . ձիւրուն պայտք : Ապ-
րէ՛ միտ պատիւով ծայր , անկումն է ան-
ձիդ՝ դեպ ի մոլութիւն քայլիկ մի՛ միակ գայտք :

×

Եթէ՛ կ'ուզես նամարտութեան բաժայտք ,
կինք , գինին ու կայրը՝ մարդս կը ձգեն . . .
փողոցին մայրք :

×

Երբոր նամարտ մագերուն բուժայր , կամ
գեղանի կնոջ վարդագոյն այտք , վրան ալ
մէկ քանի սեւուրիկ խայր , հիտէն ալ վար
լանջեցուն ցայտք , — երկաթէ կամբով մա-
րէ՛ իսկոյն կիւրեւորիկ խայրք : Երկաթը չի՛
վառիր , կը վառի՛ փայտք :

* * *

Ինչպէս այբուբենէն խեղճ կեն , հո ձա-
ղաք , անանկ ալ չորեքաբքին , հինգաբ-
քին , ուրբարք , մէկ մ'ալ նայիս անձեր տա-
հեր է շաբարք . կեանքին օրերը կը համրէ
միտով աղփաք :

×

Քիչով զոհ եղիր միտ՝ շահելու համար
 շաք, շաքին սկիզբն է մեկ հասք. եւ հաւ
 մը երբ ունիս՝ ալ մի՛ ցանկար բաղը :

X

Օղիին անունն երէ նոյն խել ըլլայ «մօրդ
 կարը», չափ քեկ քեզ անոր մեկ գաւաթը,
 վասն զի այդ քոյնին առաքը՝ կը խմեն ցոփն
 ու կաւաքը :

X

Երէ կարող ես՝ պաշտպանէ կարօտ աղ-
 ֆաքը, աղաչողին մի՛ ֆաշեր առջին ցուրտ
 պաքը :

X

Ամուսնութեան մեջ հիմայ կի՛նն է ա-
 զաքը, ամուսնալոյծին ալ կը վայել «գաւ»ը:
 Ուստի երբ պիտի ձեւես լաքը՝ աղէկ հաշուէ
 սանթիմն ու մաքը. այսպէ՛ս կ'ըսէ ողջմիտ
 անհաքը :

X

Մազն իրե՛ն կը ֆաշե երբ օփես սաքը, եւ
 կաւուն կը ճանկէ երբ խառնես քաքը. ա-
 ճանկ ալ սիրոյ մեջ զգօնն ու ժլաքը՝ իրեն
 չունի՝ բաժին կանանց գանգաքը : Բայց վա՛յ
 անոր՝ որ սիրելի յետոյ կը փրքի վաքը. այս-
 պէս կ'ըսէ լուսահոգի մեր տաքը :

* * *

Հասայ, տղաւ, յսնգերուս նոքը, ան-
 յարմար է քե ժամը, քե՛ օղը : Քիչ մընալ
 ուրիշ շաքը, ե՛լ քնացի՛ր կ'ըսէ՝

ԹԷՈՂԵ :

Երկու բարեկամներու միջև .

— Սիրելիս, անցեալ օր մեր տղան լա-
 լով տուն է եկեր, մայրիկին դանդաղաբերով
 որ ձեր պղտիկը լաւ մը ափեր է մերինը որ
 երկու տարիքը ունի անոր . . .

— Ա՛ . . . նայէ որ ըսեմ, մենք մերի-
 նին սկսած ենք Պօլիքին խմցնել, և ահա
 դուք կը հաստատէք ըսելով թէ տղան իրօք
 մեծին կրնայ կոր յաղթել իր առած ուժովը :

— Լաւ, սիրելիս, ո՛ւր կը ծախուի . . .

— Կ. Պոլիս, Պահլէ-գափու Օսմանեան
 նամակատունին ետեւի փողոցը, տոօկոյի
 ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՅ ՄԺԵՐԱՆՈՅԸ :

ՄԱՅՐԷՍ ԼԵՌՈՒ

Գիշեր մըն է լուռ, լուռիւն անծա՛յր,
 Վայրկեաններն դանդաղ են ֆայլամուր
 Կրեայի մը պէս, ժամեր կան զկար՝
 Ազ գիշերուն մեջ ծովու մը պէս խոր :

. . . Աղօտ նոյլ մը կը մարի տակաւ,
 Ճանչը զեփիւռին անուտ, քնաքեր,
 Կը սահի մեղմիկ տեղերէն քաւ,
 Հեռուն կ'երեւի ծովերու ափեր :

Անոյ սիւքին հետ՝ լուռ, դանդաղօրէն՝
 Աղու, ներդաշնակ ձայնը ջութակին,
 Ըզգացում ու բոյր ինձի կը բերեն,
 Պահ մը հմայեալ կը բովեն հոգին :

Լապտեր մը շողէ ու դիմանման՝
 Երկինքին խորը կը զբնի մինչ այդ,
 Եւ լուսաժալի կը ժմէ համայն
 Բանաստեղծներուն երազո՛ղ, անյազ . . . :

Եւ յանկարծ կ'ուռի լանջքս հրայրեալ,
 Նժդեհութեան ցուրտ շունչովը լեցուն,
 Զունիմ անուշիկ մայրս արթն մօտ,
 Հեռու եմ անկէ, հեռու՛, ո՛վ Աստուած :

Լո՛ւռ գիշեր մըն է, անհասնում, անծայր,
 Վայրկեաններն դանդաղ են ֆայլամուր
 Կրեայի մը պէս, ժամեր կան զկար՝
 Միտքի մը պէս խոնչ, սիրտի մը պէս խո՛ր :

ՍՈՒՐԱՏ ՍԱՐԱՅԵԱՆ

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

— Բարի օրինակները զօրաւոր վարժա-
 պետներ են :

— Քաջալերութիւնը յաջողութիւնով կը
 շահանայ :

— Գեղեցիկ բնութիւնը աւելի յարգի է
 քան քե գեղեցիկ դէմքը :

— Լաւ է գործով՝ կրագէտ ըլլալ՝ քան քե
 դասարկ մտնով գրագէտ :

— Համբաւ ստանալու համբան շատ դժ-
 ուար է :

— Ծուլութիւնը բոլոր մըն է՝ որուն մեջ
 չարութիւնը իր հաւկիթները կ'աճէ :

(ԱՅՍ ՏՈՂԵՐԸ ԳՐՈՂԸ ՄՈՌՅԱԾ ԸՂԼԱԼՈՎ ՅՕԴՈՒԱԾԻՆ)

ՎԵՐՆԱԳԻՐ ՄԸ ԴՆԵԼ, ՕՐՀՆԵԱՂ ԸՂԼԱՅ . . .)

Հրեշտակներու քունով կը քնանայի կորո
— Միւսի՛ւ Երուանդ, ձայնեց մէկը :

Ու, կէս քուն կէս արթուն, անկողնիս
գլուխը տեսայ Հանգիստ պատուական շա-
բաթաթերթին ցրուիչը :

— Ի՞նչ կայ, հարցուցի :

— Յօգուած պիտի տայիր . . . :

— Ձեմ գրած :

— Ես ատանկ բան չեմ հասկնար, կա՛մ
կեանքդ և կա՛մ յօգուածդ :

— Ուրեմն . . . յօգուածս կուտամ,
պատասխանեցի :

Քունը աչքերէս կը վազէր : Ի՞նչ թխմե-
լու էր հիմա :

Փողոցէն բարեկամ մը կ'անցնէր նոյն
պահուն :

Սկսայ պատուհանին ապակին ծեծել :

— Թը՛ք, թը՛ք, թը՛ք . . .

— Ի՞նչ կայ, հարցուց բարեկամս :

— Եկո՛ւր :

— Եկայ :

— Հայերեն գիտե՞ս :

— Քեզի չափ :

— Ուրեմն ա՛ն սա գրիչը, և գրէ՛ ինծի
յօգուած մը :

— Հէ՛ . . .

— Միայն նայէ որ գրելիք յօգուածդ
քիչ մը զբօսալի ըլլայ :

Ու մինչ բարեկամս աշխատութեան գը-
լուխը կ'անցնէր, ես ալ նորէն անցայ . . .
անկողնիս մէջ :

ԲԱՂԴԷՍ . . .

Առտու մըն ալ արթնցայ որ շահեր եմ
200 ոսկի, և սակայն կորսնցուցեր եմ . . .
հայրս :

Մինչդեռ այդ օրը ո՛չ վիշտ կրած էի և
ո՛չ ալ մտմտուք մը ունեցած էի, ու չէր
եղած օր մը՝ ուր կուշտ ու կուռ խնդացած
ըլլայի :

Այդ օրը սակայն, երբ իմացայ թէ պա-

պաս մեռեր է՝ ճաթեցայ . . . խնդալէն ու
մարեցայ . . . տէրտէս :

Ապահովաբար հայրիկիս մեռնելուն հա-
մար չէ՛ր որ կը տխրէի ու տէրտէս կ'ընէի,
այլ անոր համար միայն որ, ասկէ ետքը
ստիպուած էի սովորիլ թէ՛ հացին օխան քա-
նի՛ շրուշ է, և միսերուն մէջ մարիամն ա-
ւելի յարգի է՝ թէ՛ խրվըմքիս, պիտի մը-
տածէի միշտ թէ՛ ամսուն մէկին տունին
վարձը տալու է :

Օ՛հ, ասոնք իրաւ անտանելի են :

Եւ սակայն ի՞նչ օգուտ, Աստուած պո-
պան կ'ուզէր որ ես ալ մարդու կարգ անց-
նէի ու ճակտիս քրտինքովը հացս վաստակէի:
Բայց ես մտադիր էի՝ հօրս ճակտին քրտ-
տինքովը վաստկած փարան բերնիս քրտին-
քովը ուտել :

Հատնելէն ետքն ալ Աստուած ողորմած
էր : Ձէ՛, իրաւ այդ մասին ալ որոշումս
տուած էի, հատնելէն ետքն ալ անշուշտ
տխուր վախճանի մը պիտի յանգէի ուր ա-
մէն բան պիտի լմնար, ինչպէս լմնցած պի-
տի ըլլային . . . փարաներս :

Կեանքիս հուսկ բանքը, « մերձ ի մահ
գրուած » ռոտանաւոր մը պիտի արտասանէի,
որով պիտի յուզուէին և լային գերեզմա-
նատան պատին քարերը, որովհետեւ ասոնցմէ
զատ ոչ ոք պիտի լսէր զիս, ու ամէնէն
աւելի պէտք էր որ անոնք զգածուէին՝
քանի որ զիս պատին տակը պիտի թաղէին :

Անշուշտ սրտակեղէք նամակ մըն ալ
պիտի գրէի թաղին առաջնորդին, որուն
մէջ պիտի խնդրէի որ՝ ի յարգանս մսխած
ոսկիներուն՝ ինծի ներելով աղուս տեղ մը
թաղեն :

Եւ սակայն չէ՛, մահս աւելի բանաս-
տեղծական ընելու համար՝ սուսառիկ մը մէջ
հիւժուելով պիտի մեռնէի :

Յաջորդ օրը թօլայեան՝ « Օ՛հ, սիրելի
բարեկամս, դուն որ պապալիդ ոսկինե-
րը . . . բաթլամիչ ըլլալով մեռար » պիտի
գրէր, իսկ Տէր Յակոբեան՝ Օրուան
Դէպքերուն մէջ « Սրտաճմլիկ մահս » պիտի
իմացնէր պատուարժան ընթերցողներուն և

ընթերցողուններուն, որոնք պիտի ցաւէին... 200 ոսկին հետս կերած չըլլալուն համար : Եւ սակայն l'homme propose et Dieu dispose !

Հօրս յուղարկաւորութեան գիշերը կանուխ մը պառկեցայ աղուոր մը քնանալու համար, որովհետեւ յաջորդ գիշերը լուսընելու զխտաւորութիւն ունէի :

Ա՛խ, երանի թէ այդ գիշերը քնացած չըլլայի. երանի՛ թէ այդ գիշերունէ լուսընել սկսէի գիշերներս :

Անշուշտ հիմա պիտի կարծէք թէ քնացայ ու այսօր — երկու տարի ետքը — արթնցայ, որով 200 ոսկիս գրպանս մնաց, կամ պիտի մտածէք թէ՛ այդ գիշերը գողերը եկան ու հարստութիւնս տարին «մինչ մեք քուն էաք» : Չէ՛, սիրելիներս, չէ՛, առնց՛մէ ո՛չ մէկը պատահեցաւ. այդ քունը իմ կեանքիս դժբաղդութեանը ալիքն էր :

Գիշերը, երազիս մէջ, քարայրի մը մէջ էի. սեղանի մը վրայ կարմիր քսակի մը մէջ 200 ոսկիս կար, երկու քովի ալ մէկ մէկ մոմ կը վառէր, հեռուէն նուագարանի մը ուրախ ձայները կը հասնէին ականջիս, ու ես ոսկիի քսակին դիմացը չիֆթի քէլի կը խաղայի : Յանկարծ քսակին մէջէն աղմուկ մը փրթաւ, որոտո՛ւմ, չա՛նթ, և ահա քսակին մէջէն . . . մարդ մը ելաւ ճերմակ ջարդածի մէջ փաթթուած, ո՛ւֆ, չէք գիտեր ո՛րքան սոսկալի է երբ ոսկիներու կարմիր քսակի մը մէջէն ճերմակ մարդ մը կ'ելլայ : Զարմացած էի, ապշած էի :

— Պօղո՛ս, կը պօռար ան :

Դողացի :

— Այդ դրամները չը պիտի ուտես, այլ գործի մը ձեռնարկես պիտի անոնցմով : Հըրամանս աս է, եթէ հակառակիս . . . գուրպակի՛ պիտի ըլլաս :

Ըսաւ ան, ու յետոյ խօսքը կարծես անծանօթի մը ուղղելով,

— Դուրի գուրի եալ եալ, գուրի գուրի եալ եալ, սկսաւ պօռալ :

Նոյն պահուն քսակին բերանը ինքնին բացուեցաւ և ահագին մարդը պզտիկ քրտակին մէջ աներեւոյթ եղաւ :

Արթնցայ վախով և քրտինքներու մէջ :

Անմիջապէս ձեռքս բարձիւ տակ խօթեցի ու քսակը դուրս քաշեցի. համրեցի ոսկիներս, մէկ, երկու, երեք . . . հարիւր ինուսուն ու ինը՝ . . . երկու հարիւր : Թամա՛մ :

Հիմա սկսայ խորհիլ թէ դասաւարտուած էի 200 ոսկիէս փարա մը չկրնալ ուտելու. ասկից ցաւալի չէ՞ք գտներ : Մէջէն մէկ կուտ չէի կրնար ուտել, նոյն իսկ եթէ անօթի մեռնէի, ասով գործ մը պիտի բռնէի ու դրամ չանէի պիտի. բայց ի՞նչ գործ : Ի՞նչ որ ըլլար, Մարդը որոշ բան մը ըսած չէր : Ամէն բան պիտի հանդուրժէի ընել բայց . . . բայց դերասան չը պիտի ըլլայի :

Ամէնէն առաջ միտքէս անցաւ pâtisserie ըլլալ կամ բօնամօթի խանութ մը բանալ. հարցուցի հասկցայ որ առ նուազն 3-400 ոսկիի կը կարօտէի ասանկ խանութ մը բանալու համար :

Վազ անցայ :

Վերջապէս որոշեցի Օտէօնին դրան մէջ ծաղկեղանաւորութիւն ընել : Բաղդէս այդ տարին առթիւստական խումբ մը եկաւ որ շատ անյաջող էր, որ փոխանակ ժողովուրդը անքիսքներուն ծաղկեղանակ նուիրելու՝ կաղամբ կը նետէին : Մէկ ամիս, երկու ամիս, ու նայեցայ որ բանջարավաճառները կը շահին կոր, ուստի տասը ոսկի միասուելէ յետոյ ծախեցի ապրանքս և զարգալարձիի խանութ մը բացի : Հակառակ պիտի ըլլայ ես, ես այս գործին հազիւ թէ սկսած էի և ահա Բերաի բոլոր թատրոններուն մէջ շնորհքով խումբեր եկան, ասկէ զատ առողջապահական տեսակէտով ի՞նչ ի՞նչ բանջարեղէններ ուտելը միասակար նկատուեցաւ, որով մեր լախանաները և հավուճները փարա չըրին : Խանութը գոցեցի :

Օր մը իմացայ որ Պէօյիք-տէրեք քաղինօ մը կայ վարձու : Մտածեցի որ եթէ այդ քաղինօն բռնէի լաւ դրամ պիտի շահէի, քաղինօին անունը ՀԱՅ—ԼԱՅՅ պիտի դնէի որով բարձր դասակարգը պիտի յաճախէր խանութս :

Եւ սակայն բաղդէս այդ տարին Թապեայի մէջ Թօգաթեան օթէլը շինուեցաւ և բոլոր հարուստ դասակարգը հոն գնաց : Ու քանի մը քիթքիտներ ինքզինքնին Հայ-լայֆէն կարծելով ներս կը մտնէին,

սակայն անգամն ալ չէին դար , որովհետեւ գիները Հայ-լայֆական էին :

Երեք ամիս յետոյ օր մը կամուրջին մօտերը տեսայ նաւակ մը՝ ուր երկու գեղեցիկ կին կար :

— Օ՛հ , մտածեցի , աս աղէկ , կիներէն իսկ դրամ կ'առնէ կոր , մինչ կին մը տանելու համար պէտք է որ դրամ տրուի , աս իրա՛ւ շահաւոր գործ է :

Ու անմիջապէս թողուցի քաղհնօս և գրպանս մնացած 30 ոսկիի չափ դրամով նաւակ մը գնելով՝ նաւավարութեան սկսայ :

Այդ ամառը , բաղդէս , չեմ գիտեր երկինքին ո՞ր ազգականը , մայրը թէ քոյրը , մեներ էր որ շարունակ լացաւ . և ես , դժբաղդս , երկու ամիս շարունակ ոտքիս տակ ջուր , գլխուս վրայ ջուր ունենալով կին յաճախորդներու սպասեցի , բայց ի զո՛ւր :

Վերջապէս օր մը ա՛լ չը դիմանալով 30 ոսկինոց նաւակս տասը ոսկիի ծախեցի : Քանի մը զրուշ պարտք ունէի , տալէ յետոյ տեսայ որ գրպանս վեց ոսկիի չափ դրամ մը մնացեր է : Ա՛լ բան մը չէի կրնար ընել :

Ձեռք մը նոր հագուստ , զոյգ մը լոռատըխն պօք , մետաքսէ գուլպաներ , շապիկ մը , ինը սանթրիմէթ բարձրութիւնով ռապաթիւ օձիք մը , Բիկմալիոնէն կլասէ կանդեր գնեցի , հագուեցայ , չքուեցայ , չիշ մըն ալ միքստօ քսուեցայ :

— Քանի որ պիտի մեռնիմ ալ , ըսի ինքնիրենս , երթամ վերջին ճաշ մը ընեմ :

Եւ աղուոր ճաշ մը կերայ : Գլանիկ մը վառեցի և սկսայ դարձեալ փողոցները պտտիլ :

Չկա՛ր , չկա՛ր սուտէ չկար , և սակայն պէտք էր մեռնէի , ամէն բանէ առաջ սկըզբունքի աէր տղայ մըն էի , խոհերուս մէջ ա՛յնքան թաղուած էի որ զարմացայ երբ ինքզինքս ծովեզերքը դափայ : Ծովին նայեցայ , երկինքին նայեցայ ու ըսի իւրովի ,

— Օ՛հ , ա՛նա՛ գերեզմանս : Ծովը նետուելով կրնամ մեռնիլ , այս մահն ալ բանաստեղծական է . . . Եթէ մեռնելու չըլլայի՝ ապահովաբար վնդը աղուոր հարբուխ մը պիտի ըլլայի , այնքան որ օդը զով է :

Սիկառս վերջին անգամ մըն ալ քաշեցի և ծովը . . . չը նետեցի սիկառս , մատնե-

րուս մէջ ուժով մը սեղմած զայն երբ կը խորհէի՝ հեռուէն աղմուկ մը լսեցի , և չեմ գիտեր ի՞նչէ մղուած ծովը նետեցի . . . սիկառս :

Մութին մէջէն կառք մըն էր որ ինծի կը յառաջանար , չէ՛ . . . և ծովը նետուեցայ :

Ջուրերը շա՛տ պաղ էին , չը դիմացայ և քիչ յետոյ տապալկելով զգայազիրկ . . . ցամաք ինկայ :

Աչքերս երբ բացի՝ տեսայ որ թատերաբեմի մը վրայ եմ : Հարցուցի ու հասկցայ որ հոնկէ անցնող թատրոնի տնօրէն մը զիս կառք մը գնելով թատրոն բերած էր , որովհետեւ այդ գիշերուան խաղին մէջ ծովէն հանուած մարդ մը պէտք էր . մտածել էր որ իմ վիճակս շա՛տ բնական է :

Ո՛հ , բաղդէս : Ես որ դերասանութենէ զատ ամէն բանի կը հանդուրժէի՝ և ա՛նա դերասան ալ եղած էի :



Կարգացի՞ք սիրելի բարեկամիս յօդուածը : Շա՛տ աղնիւ էք , ես չկրցայ այդ համբերութիւնը ունենալ :

Ես չկարգացի յօդուածը , բայց . . . ստորագրեցի զայն , յանձնաւ երախտապարտ մնալով անոր , որ աղուոր քուշ մը և աղուոր յօդուած մը պարգեւած էր ինծի :

Եթէ ասանկ , ատեն ատեն պատուհանիս առջեւէն անցնի , շա՛տ չնորհակալ կ'ըլլամ իրեն :

ԵՐ. ԹՕԼԱՅԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԹՈՒԼԲԵՐԱՆՈՒԹԻՒՆ

Մեր յաջորդ թիւին մէջ յօդուածներ ունին՝

ՕՐ. ԶԱՐՈՒՀԻ ՄԵՐԿԵՐԵԱՆ

Ե. ԹՕԼԱՅԵԱՆ

Լ. ՇԵԹՐԵԱՆ

ՄՍՏԱԹԵԱՆՅ

Եւ լուսանկարը՝ արուեստագէտ

Ս. ԱՆԱՆԱՆԻ



ԻՄ ՕՐԱԳԻՐՍ



ԵՐԼՈՒՇԱԲԹԻ

Ձիղերդու դպած մէկ կանացի սովորու-
թիւն մը եթէ կայ, այդ ալ հիւրասիրու-
թեան ատեն կանանց զիրար համբուրելն է:

Չեմ կրնար երեւակայել անտեղի և բո-
լորովին զգուշի արարք մը այնչափ հակա-
կենցաղագիտական, որչափ բարեկամական
և կամ մտերմական այդ կեղծ սովորութիւ-
նը, որ տխուր է խոստովանել թէ ընդհան-
րացած է մեր մէջ:

Երեւակայեցէք թէ այս ունակութիւնը
ոչ թէ միայն տուներու և կամ սենեակնե-
րու մէջ կը կրկնուի, այլ փողոցը, հանրային
պարտէզներու մէջ, և . . . նոյն իսկ եկե-
ղեցիները:

Մեր հակառակ սեռը, որ չորս աչքով կը
նայի մեր վրայ, մեր սխալ ընթացքը քաշ-
քըշելու, նոյն իսկ ատոնց դէմ կը կատար-
ուին այդ սրտակցական համբուրի փոխանա-
կութիւնները, առանց ամօթի կարմիրը կը
բերու գէմքերու վրայ:

Իմ մասին, երկու քայլ ետ պիտի քաշ-
ուէի երբ նոյն իսկ քոյրս ըլլար վիզը եր-
կարող՝ ականջներուս երկու կողմը թրջելու
համար:

Ասիկայ որչափ տգեղ՝ երեւոյթով, նոյն-
չափ առողջապահական տեսակէտով վտան-
գաւոր սովորոյթ մըն է ինքնին:

Ե գիտէք թէ միքրոպսներն՝ ալ աւելի կը
սիրեն վարակուիլ մեր սեռին մէջ:

ԵՐԵՔՇԱԲԹԻ

Դեռ անցեալ օր բարեկամութիւններէս մէ-
կուն այցելած միջոցիս, ազնիւ օրիորդը,
փոխանակ ճամբորդական պատմութիւններ
կարդալու վերը սալօնը, փէշերը սօթթած
խոհանոցին մէջ կերակուր կը պատրաստէր:

Tiens! ըսի չի կրնալով զսպել ինքզինքս,
պռա՛վօ . . . և այնքան մեծ եղաւ ուրա-
խութիւնս որ խնդրեցի իրմէն զիս ալ մաս-
նակից ընել այդ զբաղումին:

Եւ ինչ մեծ եղաւ զարմանքս երբ նա-
զելի բարեկամութիւնս, զոյգ մը ձեռնոց եր-
կարեց ինձ ըսելով,

— Նա խաւշս, քիչ մը մեծ է բայց հոգ
չէ, դիր որ ձեռքերդ չաղտոտին . . .

Անմիջապէս յիշեցի սա արդար խօսքը՝
« ձեռնոց դնող կատուն մուկ չի կրնար լըռ-
նել . . . »: Նոյնպէս ձեռնոց դնող օրիորդը
կերակուր չի կրնար սովորիլ:

Խոհանոցը մտնալու համար՝ սալօնը և
կանթերը մոռնալու է, ապա թէ ոչ արդիւնք
մը չի տար:

Երանի թէ իմ և իմ բոլոր ծանօթ բա-
րեկամութիւններուս մասնները խոհանոցին մէջ
կոշտ կապած ըլլային և ոչ թէ դաշնակի և
կամ մանսօլիին վրայ . . .

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Այսօր երբ արթնցայ, չեմ գիտեր ինչ
բնազդով մը վարժուհիները մտաբերեցի,
նիւթ մը որ զիս զբաղեցուց մինչև իրիկուն:

Խեղճ քուրիկներս, իրենց պարզ թուա-
լէթին մէջ, շուկացի մանչուկներէն ալ կա-
նուխ կանցնին փողոցէն, մէկ մէկ համեստ
ծրարիկ թեւերնուն տակ, ծրարիկ մը որ
ինքնին ձեռագործ մը չէ, այլ լոկ ցերեկ-
ուան պարզ ուտելիք մը:

Կը խղճամ, ու կը մտածեմ իրենց վրայ:
Անոնք ալ ինծի պէս օրիորդներ են, պատ-
ուաւոր, գեղեցիկ և ուսեալ, որոնք դա-
տապարտուած են ամէն օր ջախջախուիլ ա-
նառակ լակոտներու դէմ, և չախլխուիլ Մեծ.
Տնօրէններու և Մեծ. Հոգաբարձուներու քը-
մահածոյքներուն նշաւակ:

Հաւատացէք եթէ օր մը նիւթապէս ա-
նօթի, և բարոյապէս ալ ամուրի մնամ, չեմ
փափաքիր վարժուհի ըլլալ: Այդ տխուր
պաշտօնը մինչև որ չազնուանայ և թէ չի յար-
գուի հրապարակին վրայ, ես զիս չեմ զոհեր:

ՀԻՆԳՇԱԲԹԻ

Աստուած իմ, աղջիկ զաւակ մը ըլլա-
լուս զղջացի պէտք է ըսել ի տես՝ կարգ մը
անտեղի և ստոր արարքներուն, զորոս ի գործ
կը դնեն եկեղեցիներու մէջ մէկ քանի մայ-
րեր իրենց հոգեհատորներուն օժանդակու-
թեամբ:

Համակ թուալէթ և ֆանթէզի, գոյն զգոյն պլուզներ, տանթէլներ, ժանեակներ, ինչե՛ր ինչե՛ր . . . որոնցմով պճնուած էին անոնք, որոնք եթէ չեմ սխալիր ի տես դըրուած էին այս կամ այն երիտասարդին աչքին առջև, ի խնդիր ամուսնութեան :

Զգուեցայ, գանեցայ, հաւատացէք խղճացի մեր իգական սեռին՝ այդքան ստոր վիճակը տեսնելով : Ինչ ոտնձգութիւն, ինչ անկում մեր սեռին համար, հեռաւոր գիւղերէն, արուարձաններէն, հազուի չքուիլ, այս կամ այն երիտասարդին ճաշակը զտղտացնելու համար :

Եւ աս ալ Աստուծոյ Տաճարին մէջ հէ՛ . . .

Հաւատացէք, իմ մասին մայրապետութիւնը կընդունիմ և այդ տեսակ ցուցադրութեանց չեմ ենթարկեր ես զիս :

ՈՒՐԱՅԹ

Չեմ գիտեր ինչո՞ւ օրիորդները՝ մանաւանդ անոնք, որոնք մազերնին վեր կը սոթթեն և որոնց ժիւրը ոտքերը կը ծածկեն՝ ի տես երիտասարդի մը քալուածքնին կը փոխեն և կ'ալազուին, բարակ քրտինք մ'ալ դուրս տալով մազերուն արմատներէն ինչո՞ւ արդեօք :

Կոխմասը, և բնականէն չեղիլը էն մեծ տգեղութիւնն է օրիորդի մը համար, ուրկէ պէտք է զգուշանանք :

Չեմ գիտեր ինչո՞ւ, երբ մեզի դիտող մը ըլլայ, ցատկոտելու կը փոխենք քալուածքնին, կը կարմրենք, կը ձերմկինք, աչքերնին հողին վրայ կը ձգենք, և ոտքերնին մէջէ մէջ կ'անցնին : Մինչդեռ պէտք է չի կորսնցնենք պաղ արիւնին, և աւելի համարձակ ուղղենք մեր քայլերը, առանց կարեւորութիւն տալու չորս կողմէն եղած նայուածքներու :

Որչափ կը խորհիմ իմ սեռակիցներուս վրայ, այնչափ բաներ մը կը գտնեմ ուղղելի, նկատելի :

ՇԱՐԱՅԹ

Սեղմիրանը անհրաժեշտ :

Ահա Տօք. Վալանդէն Նալբասի յօդուածին հակառակ գաղափար մը : Մենք օրիորդներս մինչև որ մայր անունով մկրտուինք, պէտք ունինք սեղմիրանին : Սեղ-

միրանը կոկիկութիւն է, մաքրութիւն է, և աւողջապահիկ : Անիկայ, չի թողուր որ, պառաւի մը պէս կորաքամակ նստինք, բան մը որ տգեղ երեւոյթ մը կուտայ տեսողին :

Աչքի առջև բերէք օրիորդ մը, որուն կունակը դուրս ցցուած թուլ, շիճօնի մը պէս լէսէ ալէ տեսք մը ունի, անդին երեւակայեցէք չիք աղջիկ մը որ մոմի պէս չիտակ, կոկիկ ձև մը առած է շնորհիւ սեղմիրանին : Ո՞րը կը նախընտրէք :

Եւ ինչպէս ըսի, սեղմիրանը գործածել մինչև մայր անունը, որովհետեւ մայր անունը կամուրջ մըն է մեզ օրիորդներուս համար, ուրկէ անցնողը ալ ետին չի նայիր :

Ես իմ մասին կը գործածեմ սեղմիրանը, և կը համակրիմ այն օրիորդին՝ որ օրն ի բուն կը կրէ զայն իր վրայ :

ԿԻՐԱԿԻ

Այսօր բան մը չեմ կրնար գրել, որովհետեւ զբաղած եմ, Ծաղիկներս ջրելու :

ՊԷՍԵՐԻՍ ՇԱՀԻՆԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԹԱՆԳԱՐԱՆ

Խմբագրութիւնս կը փութայ յայտարարել թէ՛ ստացած է Տէր և Տիկին Հ. ԱՍՍՏՈՒՐԻ հաւաքնադր մէկ գրքոյկը, որ ինքնին հաւաքածոյ մըն է արձակ և ոտանաւոր գրուածքներու, ստորագրուած՝ թէ օտար և թէ մեր համայնքին է՛ն սիրուած գրիչներէն :

Բուն հատորին պարունակութեան մեծ մասը կը գրաւեն Տէր և Տիկին Հ. Առաստուրի թէ ինքնածին և թէ թարգմանած գրութիւնները :

Կը ծախուի Պալենց գրատունը :

ԳԻՆ 6 ՂՐՈՒՇ

ԱՐՈՒԵՍՏԱՍԵՐԻ ՄԸ ՅՈՒՇԵՐԸ

(Շարունակութիւն)

Դուն կը հետեւիս անա՛նկ ասպարէզի մը որ՝ դժուարագոյն է քան բոլոր ասպարէզները՝ զորոնք կրնայ երեւակայել կամ գիտնալ մարդ . . . Դեր մը պիտի ունենաս Մարդկութեան մէջ որ իսկապէս վսեմութիւն մը ունի իրեն մէջ պարփակուած . . . ասիկա կ'զգամ ես ու կը ճանչնամ. դուն մեծագոյն Դաստիարակը պիտի կրնաս կոչուիլ Աշխարհ մեծ դպրոցին, ուր ամբողջ Մարդկութիւնը կ'աշակերտէ, իր տկար կամ առողջ գաղափարներովը, յուրի եւ բարձր նկարագիրովը, ազնիւ կամ անազնիւ զգացումներովը . . . դուն կենդանի ու ցայտուն օրինակներով պիտի ցուցնես, հասկցնես մարդուն թէ ո՛րն է Լաւը եւ ո՛րը Գէշ, պիտի բացայայտես Բարիին յաւիտենական ու անխուսափելի յաղթանակը Չարին վրայ . . . կը տեսնես ահա թէ ո՛րքան ընդարձակ ծանօթութիւն մը ունիմ քու նախընտրած ասպարէզիդ վրայով . . . երկու տարի, Աշո՛տ, երկու տարի ամբողջ քեզմով զբաղեցայ, վասն զի համոզուած եմ վերջապէս թէ դուն Արուեստին մէջն ես՝ ու Արուեստը քու մէջդ . . . ա՛խ, խօսքիս այս կէտին նորէն տխուր ցաւ մը, վիշտ մը կուգայ սիրտս սեղմել . . . եթէ չես նախատեսեր՝ ըսեմ քեզի որ դուն չա՛տ բաներ պիտի զո՛ւ տանիս այդ սիրելագոյն Արուեստիդ. դիւրակեցութիւն, բարեկա՛մ, ծնո՛ղ, մարդկային ամէ՛ն նկատողութիւն ու համոզում, վերջապէս կեանքդ, կեանքդ, Աշո՛տ, որ ա՛յնքան շուտով պիտի վախճան գտնայ՝ հատնումի եւ հիւժումի մէջ . . . այո՛, սիրելի՛ս, ասանկ պիտի ըլլայ քեզի՝ դուն որ ինծի իսկ զոհեցիր այդ անխախտ համոզումիդ : Ահաւասիկ անդրանիկ ողջակէզդ Արուեստիդ անյագ ու ամենակուլ խորանին . . . գիտցիր որ ես քեզի համար քոյր մը ըլլալէ աւելի . . . չէ՛, ի՛նչ փոյթ քեզի ասոնք, դուն ոչինչ կ'զգաս այս մասին, սիրտիդ մէջ մանանեխի հատի մը չափ իսկ թափուր տեղ չունիս . . . վերջացնեմ խօսքս, ու

ըսեմ քեզի ի՛նչ որ գլխաւորապէս կը փափաքէի հասկցնել, որովհետեւ ա՛լ չունչս սպառեցաւ ու ինչպէս կը տեսնես հեւքն ու խժլտուգ կուրծքիս տակ կենդանութիւն առին . . . Աշո՛տ, իմ միակ վիշտս քու ասպագայի տառապանքդ է, քու դժբաղդուութիւնդ է, մեղք է քեզի, դուն որ կրնաս չա՛տ աւելի հանգիստ ու երջանկագոյն կեանք մը ապրիլ՝ ինչո՞ւ անուսօրէն թշուառ ըլլաս եւ յաւիտենապէս թափառածա՞մ . . . եկուր, ազու՛րս, հրաժարէ՛, դարձիր այդ տուայտեցնող գաղափարէդ, առաջադրէ քեզի տարբեր ասպարէզ մը ու ընդգրկէ զայն նոր թափով մը, հզօրագոյն աշխատութիւնով մը . . . :

Սահմակած էի, մինչեւ հոս չէի կրցած բառ մը, վա՛նկ մը արտասանել՝ այնքան անձկագին ուխտութիւն մը գրաւած էր բովանդակ էութիւնս :

— Ատ անկարելի՛ է, ըսի օրհասականի հռչակներով մը :

— Այդ պատասխանիդ կ'սպասէի՛ արդէն, ըսաւ ան, սակայն ինչո՞ւ . . .

— Ինչո՞ւ, գոչեցի, ինչո՞ւ . . . որովհետեւ ես անո՛վ միայն կրնամ ապրիլ՝ անկէ դուրս ինծի համար չէ՛ թէ բերկրագին կեանք մը՝ այլ վշտալի մահ մըն է որ կ'սպասէ. ձգէ զիս, Պերճուհի՛, թո՛ղ որ ես դերասան ըլլամ, տառապիմ, քաջքուրմ, կեանքս թշուառութեան եւ անօթութեան ստուերոտ չըջան մը ըլլայ, թո՛ղ հիւանդանամ, հատնիմ ու մեռնիմ, ա՛յս է ահա իմ երջանկութիւնս, այսպէս է տնօրինէր Յրկնայինը. թո՛ղ անարգեն զիս, պատիւ ու կարեւորութիւն չընծայեն ինծի, հոգս չէ, ուրիշին մտածութիւնը, ուրիշին դատումը ինծի ի՛նչ . . . Պերճուհի՛, թող դժբաղդ ըլլա՛մ՝ բայց դերասան ըլլամ . . . :

Հիմա կուլար հէգ աղջիկը : Զեւքերս ափերուն մէջ առաւ, ու կուրծքին վրայ դնելով սկսաւ ծանր ու դողդոջուն ձայնով մը խօսիլ :

— Ես պիտի մեռնիմ . . . գիտեմ թէ սա րոպէին իմ մասին սէրի ամենափոքր նշոյլ մը իսկ չունիս . . . սակայն մեր անցեալ օրերուն սէրին համար ներէ՛ ինծի՝ զգացումներուդ հակառակ քանի մը խօսք ըսած ըլ-

լալուս համար . . . դիտցիր թէ քեզի ի՞նչ որ ըսի՝ ամէնն ալ անկեղծութենէն ծնունդ առած էին . քեզի հասկցնել կ'ուզէի թէ շատ դժբաղդ պիտի ըլլաս :

— Թող դժբաղդ ըլլամ, տառապիմ, մաշիմ, մեռնիմ վերջապէս՝ սակայն դերասան ըլլամ :

— Լա՛ւ, ալ այս մասին չը պիտի խօսիմ . . . կը յուսամ թէ համոզուած ես որ քեզի նկատումով սէր մը ունիմ, որուն պատճառով է որ քու մասիդ միշտ կը խորհէի ու կը խորհիմ . . . վերջապէս պահն է ըսելու թէ՛ մեռնելուս պատճառն ալ ա՛յս է միայն . . . այս խօսքերս քեզի համար զգայուն ըլլալէ իսպառ զուրկ են, գիտե՛մ . . . սակայն ինծի համար . . . ա՛խ Աշո՛տ, դուն դարձեալ պիտի վայելես աշխարհի գեղեցկութիւնները, պիտի ապրիս . . . ապրէ՛ սիրելիս, քեզի յաւիտեանական երջանկութիւն մը կը մաղթեմ . . . դուն չա՛տ վիպական տղայ մըն ես ու միշտ այնպէս պիտի մնաս . . . կ'ուզեմ որ ամուսնանաս, սիրուն, շատ սիրուն ընկերուհի մը ունենալուդ համար աղօթող եմ . . . երջանի՛կ, նախանձ առթելու չափ երջանիկ ըլլաս, երանի թէ . . . դո՛ւն՝ այնքան անտարբեր սէրի՛ կը փափաքիմ որ միշտ այդ սիրտին տէրը մնաս, որովհետեւ . . . հիմա կը հաւատամ թէ երջանիկ ու երկար ապրելու համար քեզի՛ պէս հարկ է ըլլալ . . . տակաւին փոքր է տարիքդ, լաւ զգալու կամ լաւ խորհելու հասակիդ մէջը չես . . . կիները աւելի՛ շուտ կ'արթնան, աւելի կանուխ կը սթափին՝ աւելի՛ շուտ նուաղելու համար . . . կ'զգայ՝ շուտ հասնելու, կանուխ կը փթթի՛ կանուխ խամրելու, թարաշամելու համար . . . բոյրերը մեզի պէս չեն . անոնք ինչ որ ալ ըլլայ՝ մեզի չափ զգայնիկ արարածներ չեն և չը պիտի ըլլան . . . դուն ալ անշուշտ օր մը պիտի ըլլայ՝ ուր տարօրինակ զգացումի մը խլրտիլը պիտի իմանաս կուրծքիդ տակ . . . դո՛ւն ալ պիտի սիրահարուիս, և անանկ մէկու մը՝ որ գուցէ քեզի կարեւորութիւն չը պիտի տայ . . . կը վախնամ որ եթէ դուն օր մը սիրես, այդ օրը քեզի համար խիստ դժբաղդ ու մահաբեր կեանքի մը սկզբնաւորութիւնը պիտի կազմէ . . . որովհետեւ քեզի պէս մարդերը,

որոնք զգացումը և գաղափարը չունին կին մը սիրելու . . . եթէ երբեք սիրեն՝ այդ սէրը . . . ահաւոր և աղետալի կ'ըլլայ . . . Զեռքերդ ինծի տուր, Աշո՛տ . . . աչքերուն մէջ նայէ . . .

Հոս կանգ առաւ : Աչքերը արցունքներով լեցած էին . կարճ այլ արագ չնշառութիւն մը նիհար կուրծքին անչափ ելեւէջ մը կուտար, կմախացած ձեռքերուն տապը՝ ձեռքերս կ'այրէր : Շուրթները կը դողային : Զայնը փափսուք մըն էր ալ :

— Ըսէ՛, կը խոստանամ ինծի . . . ինծի չը մոռնալ . . . յիշատակիս յաւերժացումին համար քեզմէ ոչինչ կը պահանջեմ . . . ե՛ս կ'ուզեմ անտեսանելի հետք մը ըլլալ տարազաւ միտքիդ վրայ . . . ըսէ՛ Աշո՛տ, խօսէ, . . . երգում ըրէ . . . :

Ու ես չէի խօսեր, վանկ մը իսկ չէի արտասաներ :

Զեռքերս թողուց ու՛

— Գնա՛, գնա՛ . . .

Ըսաւ ան ձայնով մը՝ որ կտրծես կոհակայոյզ ուկէանի մը խորերէն կուգար : Ու տղայի մը պէս հեկեկալով գլուխը բարձրուն մէջ թաղեց և լացաւ, խռոված, յուզուած :

Անձայն ու անշուշտ ոտքի ելայ ու վերջին նայուածք մըն ալ ուղղելէ յետոյ այդ կոյս մարմինին, դուռնէն դուս ելայ, հեռացայ՝ մինչ ան կը մնար անկողինին մէջ խաբուած ու լքուած աղջիկի մը պէս, տենդայոյզ ու դողդոջուն, ընկճո՛ւն :

Քանի մը օր ետքը սեւով եզերուած թուղթեր՝ անոր մահը կը յայտարարէին :

Մինչև դերեզման դադալին հետեւեցայ, անյոյզ ու անզգայ :

Գերեզմանափոսին վրայ դրուած ծաղկեպսակներէն մանուշակ մը առի : Այդ խոնարհ ծաղիկը մինչև այսօր պահած եմ :

(Յաջորդ թիւով)

ԱՇՈՏ ՄԱՍՔԵԱՆՑ

Ձ Ե Կ Ո Յ Ց

Մեր այն բաժանորդները՝ որոնց հասցէին չըկած էինք իրենց առ կախ հաշիւները, կը խնդրուի որ հաճին ընդ փոյթ պատասխանել :

Ք Ր Ո Ն Ի Կ

ՇԱՐՔՈՒՄՆ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Ձեզի, ազնիւ ընթերցողներս, բերան-
փոխ մը հրամցնելու համար, այս անգամ
կը փոխեմ, սովորական կնահոտ և
տուտուլապատիւ յօդուածներու շարքս, ու
կը ներկայանամ իբրեւ շաբթուան քրոնիկագիր,
որով յուսալից եմ թէ պիտի կրնամ երկու
պարբերութիւն քով քովի բերելով ձեր ե-
րեսուն երկու . . . կեղծ ակռաները տես-
նել ինչան քրքշալիւ խնդուքի:

Նա՛, առաջին նիւթս պիտի ըլլայ չսի-
րած և չսիրած բաներու թուումը, զոր
ի ստորեւ պիտի չարեմ, սա արդար համոզ-
մամբ թէ՛ ամէն մէկ նիւթն ունի զուր և
ինծի հետ համակարծիք, գլուխ պիտի չար-
ժէք:

1. — Ձեմ սիրեր ես, չեմ ասործիր՝ այն
կարգ մը տիկիններէն, որոնց ամբողջ մաս-
կոյտը լաքեռտայի ֆրէշին կը յիշեցնէ ինձ:

2. — Կիներ՝ որոնք շոգենաւին մէջ և
կամ հանրային պարտէզներու մէջ վաթ-
սուննոց սիկաւ մը թուքոտելով, Վեստմի
խառնարանին պէս մոլիս ու ծուխ դուրս
կուտան դէմքերնուն երեք ծակերէն:

3. — Օրիորդներ՝ որոնք ա լա մօտ բէշ
բռնելու համար իրեց ագեղ կողմերը կ'ուր-
ուազեն՝ ըլլայ փողոցը, ըլլայ նոյն իսկ
եկեղեցւոյ մէջ:

4. — Օրիորդներ՝ որոնք «աղուորնանք»
ըսելով այնքան, քառիքաքիւռ մազ կը չըս-
կեն որ կատարեալ խառախոնճող մը կը
դառնան, և որ սակայն մօտա ըլլալուն ի-
րենք կը հաւնին միայն:

5. — Օրիորդներ՝ որոնք իրենց թարմ
ու թաւշանման դէմքերնին կը մալակոնեն
ճերմկնալու համար, և որ սակայն կարմը-
նալու համար երբէք հոգ չեն տանիր: Ամօ-
թի և խիպի կարմիրէն աւելի կը սիրեն լա
տամ օ Գամմիլիաի վերջին վարագոյրին չի-
նած դէմքը կրել . . . մալթայի թողով և
կամ իւստիւպիճով:

6. — Նշանած օրիորդ մը, որ «քէլէրի
խաբաթմիշ ըրած» ի պէս կիրակիները մա-
նաւանդ բաց օդին, իրենց նշանածին թե-

ւէն կը կախուին և աչքերնին տուներն ի վեր:

7. — Դարձեալ նշանած օրիորդներ, ո-
րոնք լուրջ դէմք մը կ'առնեն հանրութեան
աչքին առջև, և բոլորովին կը փոխուին, ի-
րենց նախկին թեթեւութիւնը կը ձգեն՝ ու
ա՛յնքան ծանր հովեր կը փչեն որ դէմինին
միկոնէն կը պատճառեն:

8. — Փեսայասէր զոքանչներ, որոնք
իրենց փեսին սիրոյն, անդունդէ անդունդ
կը գլտորեն իրենց ամուսինները, առանց
խնայելու իրենց բուն նեցուկին:

9. — Շիք հագուած օրիորդ մը, որ ճեր-
մակ պանիր կ'ուտէ և խօսած ժամանակ
ակռաներուն մէջ կը տեղաւորուի բարառքը:

10. — Մանկամարդ տիկին մը՝ որ խո-
րոված միսի ոսկորները բերնին տանի շուր-
ջանակի իւղոտելով քսուքոտած բուտան:

11. — Նոր հարս մը՝ որ բոպիկ ոտքով
պտըտի իր ննջասենեակին գորգին վրայ,
նոյն իսկ ամուսնոյն ներկայութեանը:

12. — Վերջապէս չեմ սիրեր և չեմ ա-
խորժիր լսել, գեղեցիկ օրիորդի մը բերնէն
իր նշանածին հասցէին ուղղած սա բառերը,
հոգիդ ուտեմ:

X

Շարթուան մտածումներու մէջ աւելորդ
չեմ համարիր նիւթ առնել հետեւեալ à pro-
pos causerie՞ն, որ անցած է երկու բարե-
կամներու միջև:

Երկու սեռակից և սրտակից բարեկամ-
ներ, որոնցմէ մին նշանուելու . . . դժբաղ-
դութիւնը ունեցած էր մօտեքս, իրիկուն
մը թմրած գլուխնին տաքցնելու համար
Սբանտիտի ցուցափեղկին առջև դէմ դիմաց՝
Տեաւ թաւշանճեանի Երապէս ընելու պէս
չին չին գաւաթներ կը պարպեն:

Առաջին գաւաթին խօսակցութիւնը կը
դառնայ տակաւ մերձեցող ձմրան վրայ:
Երկրորդին՝ գիշերներու երկարելուն և առ-
տընին ընտանեկան ժամանցներու վրայ:
Երրորդին՝ թուրքական վրայ ցատկաւելով
անցնող գեղեցիկ սեւին վրայ: Չորրորդին՝

անցեալ անկատար սիրորտորդութեան և անոնց հետեւանքներուն վրայ : Վերջապէս հինգերորդ գաւաթին է որ խօսակցութիւնը կը կեդրոնանայ նշանածին վրայ , նիւթ մը որ մոռցնել կուտայ տունը , ճաշի սեղանը և ժամացոյցը :

— Ախպար , աղուոր է աղուոր է ամա՛... քիչ մը ակուաները պիչիմսիզ կերեւայ կոր... ան քանի քի բերանը կը բանայ կոր նէ տաք չորպային մէջը պաղ ջուր կը թափեն կոր գիտես քի , կըսէ նշանածը , պատառաքաղը աղանդերին երկնցնելով :

— Ատա՛մ . . . հոգդ պիլէ մընէր . . . էկէր աղջկանը խուսուրդ տկուանինն է նէ , զաւալլըն քեզ առնելէն ետքը խնդալի՛ք չունի՞ քի ակուաները երեւայ . . . ատ է նէ բան մը չէ ըսելով վերջին ծայր չըջահայեցութեամբ հասկցնել կուզէ բարեկամին թէ , զինքը առնող աղջիկը դժբաղդ պիտի ըլլայ :

Ու կը մտածեմ թէ չուկայի սրամտութիւնը որչա՛փ բարձր է օրաթերթերու սիւնակները մրտոտ պիլնամազ լաքլաքներուն քով :

×

Անցեալ օր հասուկ օրիորդներու մայր մը զիս տեսնելուն սկսաւ զանգատիլ օրուան երիտասարդներուն վրայ , ու չի քաշուեցաւ զանոնք անուանել «մայմուն իշտահլը» :

Խեղճ կինը որ չորս աղջկան սուգը կուլար , խօսք առաւ :

— Քա եւրոլում , ես ալ չիյտեմ , ի՞նչ ընեմ , որին կ'ընեմ հանեմ զաւակներս , պղծաբանիկս չեն քի տակերնին մէյմէկ մինտէր դնեմ տէ չորս պուճախը շնդուկեցունեմ , աս ֆիստան է , աս չաքխայ է , աս մօտայ է , աս բուռնայ է կըսեն , պիր տիւզ մարսուֆի դուռ կը պանան կոր , հարերնին մեռաւ նէ չորս հատ ախար ձգեց ինծի , Չարուկա , Յուլիկա , Մէօ՛րիւպէս , Ըռընտիկա , էյ իրաւ քի Առտուճոյ ճիւլէներն են ամա՛ , ինչ ֆայտա քի , ետթըմ մալ եղան ալթըխ :

— Լաւ տիկին մայր , ի՞նչ բարեմանութիւններով օժտեալ են հարցուցի իրեն , կարեկցելով տիկնոջ յուսահատ վիճակին :

— Սանքի աղուոր են տէյի կը հարցունես կոր նէ , դպիսը իմ աղջիկնութիւնս , քիթէս են ինկեր չորս նալ . . . :

— Ո՛չ , ըսել կուզեմ որ ձեռագործ , կար , դաշնակ , կերակուր , և դեռ ուրիշ իրենց սեռին յատուկ տաւելութիւն մը ունին , հարցուցի չի կրնալով զսպել խնդուքս :

— Հապա , մենքս տոտոխներ մը ունի քի , մէկ համլային չալը աւելը փառա բառչա կընէ , անկից վարըս , տօլմա մը կը դնէ քի պերնիդ լայըխ , օւթանճաս ասելս կը ծեծէ ասելս կը ծեծէ քի , ույարսըզ , պղծաբանիկս ալ գիր կարդալը հաթիմ պիթիմ է : Աս ամէն կիրակի խազի սիւրիւի պէս առջիս կը ձգեմ դուրս կը հանեմ ամա տիւմանիլին հոտ կը դառնան , քա մարիկ , էլ ալէմին մալը ինտոր կը քշուի չիյտեմ , խելքիս պանը չէ . . . :

— Տիկին մայր , ձեզի խրատ մը տա՛մ , կընդունիք առաջարկս . . . :

— Էյ ըսէ նայիմ եւրոլում , օլտուխճա պէյնըդ իչլէկ է . . . :

— Հիմա , աս կիրակի ալ ըստ սովորականին չորսը մէկ դուրս կը հանէս , եթէ նորէն չի կրնաս յաջողիլ , այն ատեն , տուփ մը բաւտուր լօս կառնես , մէջքդ քօռսէ մը կանցնես , մազերուդ ալ ներկ կը դնես ու յաջորդ կիրակին մինակդ պատյտի կելլաս , և գրաւ կը դնեմ որ երկուշաբթի տանդ սալօնը խալալուզ տէրպապաները իրար կը կզեն աղջիկներուդ յաճախորդ ներկայացնելու մարմաջէն :

Որչափ միամիտ են սա կին ըսուած արարածները :

Երկու օր վերջ նոյն տիկինը տեսայ իր ultra թուալէթին մէջ , ամէն բան յարմարեցուցած էր , բայց խեղճին դէմքը քսած բուռնայէն , սխալաճի խայմախ էր դարցեր :

×

Եթէ սիրտ կոտրելիք պարագայ մը կայ մեր օրուան մատմադէներուն համար , այդ ալ օգերուն գովութիւնն է :

Ալ նոնոշիկները չպիտի կրնան բեմայեգար միսերնին ցուցադրել Երթաք բարեա՛ւ մուսրին պլուզներ , պուտէներ , տանթէներ , ժապաւէններ , այսօր հասուկ օրիորդութիւնը (փոխան երիտասարդութեան) ձեր սուգը կ'ողբայ : Այլ ևս փողոցները պիտի դադրին ննջասենյակներ գառնալէ , ալ բժիշկները պիտի դադրին հոս հոն վաղվառելէ , և ի-

րենց պիւտճէն հաւասարակշռելու համար գալ տարուան ժողովներուն պիտի սպասեն, ուր թերեւս աւելի տէքզլթէ մօտեւորեալ շնորհիւ կարենան մէկ մէկ արաւթը մանի տէր ըլլալ :

Այս առթիւ աւելորդ չէ միտարել նաեւ մեր պիզ պըլըխ միւսիւնները, որոնք շնորհիւ այս տարուան Առաքելին բաւական օգտուեցան, այնպէս որ էն աչքը գոցը անգամ կրցաւ գաղափար մը կազմել թէ՛ օրիորդի մը վիզին և թեւերուն գոյնը, ճերմակ կըլլար թէ բաց կարմիր . . . :

Արդեօք քանի քանի երիտասարդներ քանէ գործէ մնացին, իրենց ճամբուն վրայ հանդիպած օրիորդին թեւերը և վիզը ուսումնասիրելու մարմաջէն, և որոնք վերջէն պատուական խօսք—ծեծ մը կերան բաթնունէն :

Այս տարի քիչ անգամ չէր որ հանդիպեցայ այդ կարգի հարթաներու, որոնք փողոցին երկայնքը, ապուշի չողիկներ կը վազցնէին միւսերու միւսը զիտելով, և որոնցմէ մէկ քանին, մինչև անգամ թռան վայր և կամ կառքի զոհը պիտի ըլլային այնքան խորունկ ինկած էին իրենց ուսումնասիրութեան մէջ :

Հաւատացէք, այսօր հայր մը չը գիտեր իր աջջկանը մարմինին գոյնը, որչափ վաճառականներու գնայ—եկուրծիները, որոնք պատեհութիւն ունին մօտէն տեսնալու այդ միմոտիս խուշիկներու ներքին կազմուածքը :

Ձեզի բան մը ըսե՛մ . . . , ամօթ է՛ և բողբոջին այսպիսի ձեր մուսուլին պիւզները, ազնուութի օրիորդներ : Ես պիտի առաջարկեմ, եթէ կարելի է եղանակին յարմար տուաթեալ բեստիլի սեղկէճ ընել ձեր քուանքառան պիւզները, որովհետեւ աւելի բուսթիք է ատոնցմով տուաթեալ սիւզմիւշ ընել քան թէ խեղճերը իւզտիւրմիւշ . . . :

X

Շարժուան մտածումներուս մէջ կը մտածեմ կարգ մը չպիտոյ հովկուշներու վրայ, որոնք օրն ի բուն սրճարաններու անկիւնը նստած քիթ կը քաշեն այս կամ այն կրթական կամ եկեղեցական խնդիրներու վրայ : Եղած կարգադրութիւններուն չեն հաւնիր, կրթական, դպրոցական ծրագիրները կը կը-

ղեն և բնաւ կարեւորութիւն չեն տար ուսուցչական մարմինին, ինչպէս նաեւ Աղքատախնամի գործառնութեանց և ընթացքին զիտողութիւններ կը տեղան :

Ասոնք, և ասոնց նման չպիտոյ մարդիկ, երբ կարգը դրամականին գայ, եկեղեցւոյ պայծառութեանը համար փարայ մը անգամ չեն խտար, և ոչ ալ հարկւաւոր աղքատները ջեռուցանելու համար աղքատախնամ մարմիններու հինգ փարայի օգնութիւն մը կընեն, այլ, երբ կարգը հակառակ խօսելուն գայ, մամուս հողաթափները կարճ կուգայ իրենց լեզուներուն քով, որոնք կ'երկարին ու կ'երկարին, իբր թէ իրենց գաղափարը է՛ն գործնականը ըլլալ :

Այնինչ վարժարանին տեսուչ մը կը կարգուի, և ահա լեզուները կ'երկարին, ձայները կը բարձրանան ու բամբասանքը թափ կառնէ :

Այսինչ Աղքատախնամը իրեն հիւանդները դարմանելու համար բժիշկ մը կ'որոշէ, և ահա նոյն մարդիկը սրճարաններու անկիւնը, հանրային պարտէզներու ծառերուն տակ կոկոսին իրենց իբր թէ արդար (:) դիտողութիւնները ցանցնել, որպէս զի հանրութիւնը լսելով զիրենք, ձայնակցի և բեկանի յանուն աղքատաց արուած որոշումները :

Կը ցաւիմ, ցաւելէ աւելի կը խղճամ այդ կարգի դատարկամիտ մարդոց վիճակին վրայ, մտածելով թէ իրենց այդ անտեղի բնոյթը հիւանդութիւն մը դառնացած է ալ, և որուն դարմանը լուսահոգի Խոռասանճիեանն ալ չէր կրնար հասնել :

Ըստ իս աւելի լաւ կընեն այդ կարգի մարդիկը սեղանի մը շուրջ խաղալ, քան թէ խճճանք, իրենցմէ չատ վեր կրթական և եկեղեցական խնդիրներու շուրջ :

X

Վերջացնելէ առաջ շաբթուան մտածումներս, դատիւ ունիմ յայտարարելու արդոյ ընթերցողներուս թէ, յաջորդ թիւով պատիւը պիտի ունենամ հրամցնել ձեզ օրուան նիւթ մը, իր էն զուարթ մանրամասնութիւններովը :

ՍԱՐԸ-ԵԱՐԻ ԳԻԻՂԱԴԱՐՁԸ

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

ԶՈՒԱՐՃԱԼԻ ԽՕՍՔԵՐ

— Հալկալքոլական յօդուածամբցութիւնէն (նոր բառ, տես Պոլսոյ Հայեւլարը էջ 1545768: Վիճակահանութեան թիւ չկարծուի) որոնք դարձի եկան ու թողին օղին:

— Անոնք որոնք այլեւս կուտ չունենալով՝ ապառիկ առողջ օղիւպան մըն ալ չըգտան:

×

— Աշնանամուտին ամէնէն բազմաւորեալներն որոնք են:

— Այն երանկիւնները՝ որոնք վարժապետ չեն և ունին անցեալ տարիէն տունը մնացած մէկմէկ զոյգ գործածուած անծակ ու անցել (բառ ինչ ի գործարէ յաշխարհաբար ածեալ) լաստիկ կալօջ:

×

— Ո՞րն է պարտիզպանական ամենէն մեծ յաջողութիւնը:

— Զմեռ ատեն առանց ջերմանց ունենալու Ծաղիկ ունենալը:

×

— Ի՞նչպէս կարելի է գիտնալ թէ ի՞նչ հագուստ կը հագնէր նախամայրն Եւայ:

— Երբ կը տեսնես կին մը ամառուան մուսլինազարդ դարավերջիկ թուալէթով անձրեւի բռնուած:

×

— Որոնք են որ առանց տեսած ու գիտցած ըլլալու կը վկային:

— Դամբանախօսները:

×

— Ի՞նչ գործի կ'ըլլան մեր դպրոցական շրջանաւարտները:

— Հարիւրին յիսունը վարժապետ, քսանը հինգը խօստուռաճիի աչկերտ իսկ մնացեալը պապայլը-Ֆոլիոնի պետ: (Սխալ հաշիւ, ըստ մեզ՝ հարիւրին ինըսունը ինը բանաստեղծ Ծ. Խ.):

×

— Ո՞ր բարի պատուները կուտ չունին:
— Իզմիրի համբաւաւոր անկուտ չամիչը և մեծանուն երգիծաբան Երուանդ Թօլայեանը:

×

— Երեկոյթի մը գացող հրաւիրեալներէն ո՞ր խումբը ամենէն շատ կը պատուուի տանտիկիներէն:

— Այն խումբը որուն տուգինայէն միայն երկուքը արու են:

×

— Ի՞նչ բանի վրայ մարդ շատ կը զարմանայ:

— Կատուին լուածք ընելուն, տիրացու յին յօդուած գրելուն, Թորոսեան Գրիգորին լուծթին պահելուն, յոյն աղջկան ժամկոչ աղբօր սիրահարուելուն ու այս պարապ խօսքերն ալ կարգացողներուն:

— Կնոջ ամենէն մեծ գեղեցկութիւնը ո՞րն է:

— Մինչեւ հիմա գիտէինք թէ հաւատարմութիւն, խոհեմութիւն, հնազանդութիւն, տանտիկիութիւն եւն. ասոնք էին. բայց վերջին ժամուն առնուած լուրերը կըսեն թէ փոխանակ այսչափ ութիւններ ունենալու՝ կը բաւէ երբ միայն կուտը շատ ըլլայ:

Ե. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՄԱՇԵՐԳ

Գոռ ղօղանջը կոտ գանգակին պղինձէ, Երեւի մէջ անդո՛ւլ, անլո՛ւռ կը թնդայ, Մեխմադանոս հոգիս ամբողջ կը ցնցէ՝ Անոր լալիւնն ու ողբերը անխրնայ:

... Լա՛յն խազերը խորհրդաւոր գանգակին, Բանաստեղծին մութ մթին մէջ մի մեռւե կը ցանցնէ, կը խռովէ իր հոգին, Դօղանջն անոր սեւասաւած մահագոյծ:

Սեւ սեւ մարդիկ անա կուգան իր աչին, Որոնք կուլա՛ն դառնակսկիծ ցաւերով. Ան փղըձկած՝ հոն մեկուսի դառնագին կը հեծեծէ՛, կը հառաչէ՛ հոգեթով:

— Մ'անապաւեր, ինծի համար ալ կ'երգես Քու մահերգը, գոռ ու զոյք սարսուազին, Ես կը գրկեմ գերեզմանը սեւագես, Մի՛ ընդհատիր, արագ հնչէ՛ եւ ուժգին...—

ԱՍՏԻՆԷ ԴԻՐԻՈՐԵԱՆ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Արուարձանէ մը մեզ կը գրեն թէ, կիրակի կնունքի մը առթիւ սարքուած սեղանին նախագահող շնորհունակ մը սեղանակիցներու ուշադրութեան միակ առարկան է գարձեր, իր ուտելարանութեան մէջ ունեցած անմրձելի ճարպիկութեամբ: Երանի թէ եկեղեցական իր պաշտօնին մէջ ալ նոյն փութկոտութիւնը ցոյց տար Տէրպապան:

— Սկիւտարէն մեզ լուր կուտան թէ, անցեալ օրուան օգին զրաութեան պատճառաւ պտոյտի ելլող նշանած կամ ոչ նշանած զոյգերը, քիթերնին մոտ մոտ տուն դարձած են, ուր մայրերու պատրաստած տաք տաք ընդունար յիշին իրենց կ'սպասէր:

— Նոյն արուարձանէն մեզ կը տեղեկացնեն թէ, վարժարաններու մէջ ձեռնարկն աշխատութիւնն անուամբ դասընթացքի հետեւանօք, տղաք իրենց հայրիկէն մէկ մէկ փաթիկ մկրատ խնդրած են: Արդեօք այդ միներիկներու ձեռքը տրուելիք մկրատներուն տեղ մէկ մէկ գրիչ աւելի օգտակար չէ՞ր կրնար ըլլալ: Մեր տղաքը ատաղձադորժ ընելու փափաք չունինք, անոնց պէտք եղածը ուսում և գիտութիւնն է:

— Օրթա-գիւղի մէջ տան մը սպասուհին ցերեկ մը իր տիկնոջ բացակայութիւնէն օգտուելով անոր ֆօքսիլն վիզիքը կռնակը անցուցած և գլխարկը գլխուն փողոց ելած միջոցին, յանկարծակիի եկած է խեղճը՝ մատաւին դէմը ելլալով: (Չենք գիտեր թէ՞ երբ տանը աղան ըլլար դէմը ելլողը ի՞նչ արդիւնք պիտի ունենար հանդիպումը: Ծ. Խ.):

— Սկիւտարէն կը լսենք թէ, տի-

կին մը չի կրնալով խոհարարի խախտը քաշել, զայն ճամբեր և ինք ստիժաւորած խոհանոց իջնալուն, միս կտրելու մէջ առաջին փորձը ձեռքին վրայ ըրած է մատին լոբը հանելով: (Քէօռնայ աչքս: Ծ. Խ.):

— Տօքթօռ վալանթէն նալրասի «Տէֆօքթէ» յօդուածը այնքան յաջող արդիւնք մը ունեցեր է կանացի աշխարհին մէջ, որ նոյն հագուստներէն ունեցողները հետեւեալ օր չուկայ իջնելով՝ ըստ շանիներէն գոյնին յարմար կտորներ գնելու և իրենց վիզը և թեւերը ծածկելու են: (Չենք գիտեր թէ ձմեռնամուտի՞ առթիւ էր այս կարգադրութիւնը, թէ՞ իրօք յարգելի տօքթօռին յօդուածին արդիւնքը: Ծ. Խ.):

— Տակաւ մօտեցող ձմրան առթիւ, գիւղերէն դարձող ընտանիքներ իրենց տունները մաքրելու համար պատուհաններու մէջ անկիթե ցուցադրուելուն և գիրենք գիտելու փափաքը տածող մէկ քանի միւսիւններ, Բերայի թոթոռառին վրայ պօյ կը չափեն:

— Մաքրի-գիւղի սթասիօնի զօտարանին պիշտոտօճիկները ափ ի բերան կը մնան, հռչակուար bon tireurին ի տես որ մէկ ժամուան մէջ 00000001 քառամպօլ կրնէ մէկ մէկու ետև:

— Կը լսենք թէ անցեալ կիրակի Սկիւտարցի մօրուսուար երիտասարդ մը ծանօթ բարեկամուհի մը պտոյտի տանելու խօստումը գրեթէ ըլլալուն, յուսախաբ օրիորդը բզբտելով գլխարկը հանէր և պատուհանին առջև հէօնկիւր հէօնկիւր լացեր է: (Մարգարիտ արցունքներ: Ծ. Խ.):

ԱՐՏՈՏԱՏԵՐ ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ
Պապ-Ալի հասէսի թիւ 23

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՊԵՐԱԶԵՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուրբան Համամ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ողջութեամբ, ապրանաց տու-
կունութեամբ և գիներու անմոյցելի ա-
ժանութեամբը շահած է բոլոր իրեն գի-
մող յաճախորդաց վստահութիւնը, այս
անգամ ձմեռուան յատուկ ընտիր հա-
գուստներու, կանանց քեյրոնիներու և
տղայոց չիք և գիմացկուն ֆաբրիկաներու
ծուր մթերք մը պատրաստ ունի, որ
չերմապէս կը յանձնարարուի ամէն ա-
նոնց, որոնք պէտք ունին ներկայ եղա-
նակին հագուստի և ուրիշ նմանօրինակ
պիտոյից.

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրչ է.
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին.

50—6

ՇԷՆՔԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱԹ ՆԵՐԿԵՐ

National wall coating & Lythite

Աժան, լուսաւոր, շուտ կը չորնան,
վրայ չեն ելներ, գոյներնին չեն նետեր,
ջուրի և անձրեւի կը դիմանան, միւլկ-
ները կը ջնջեն և չն. և չն.

Պատանայի ներկերուն իւրաքանչիւր
քառ. արչընը 10—15 փարայ.

Ներսի և դուրսի ներկերուն իւրա-
քանչիւր քառ. արչընը 20—30 փարայ:

Տեղւոյս ամէն կողմի Պատ. յաճախոր-
դաց գիւրութեան համար, վաճառա-
տունս պատրաստ է աղյն գնետոյ իր վը-
րայ առնել ամէն գործ, թէ ներկն և
թէ գործաւորողէի մէջն ըլլալով:

Թուրքիոյ միակ կեդրոնատեղին

Կ. Պոլիս, Ալաճա-համամ, Պագըր-
ըլլար թիւ 26, Գ. Անեմեան: — Գա-
ւառները գործակախներու պէտք կայ,
գիւրամատչելի պայմաններով:

20—20

ՖԷՆԻՔՍ ՕԹԲԻՇԻԷՆ


ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ.

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Քրանց



ՀԲԴԵՀԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Քրանց

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ չէնք, ապրանք և կարասիք:

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մարդկային
կանքի վրայ:

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չոգենաւի՝ եւ ա-
ռագաստանաւի վրայ:

Ընկերութեանս դրամատունն է ՔԻԷՏԻ ԼԻՅՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասեն-
եակն է Պոլիս, Ալեանաք խան, Թիւ 11—16:

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր Գերկայացուցիչ


Գ. ՖԷՐԱՏԵԱՆ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏՈՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԷՏ ԹԷՅԵՐ

Կ. Պոլիս, Պահահ-Գափու, ձեյալ-Պեյ խան, քի. 10

ՀԷՐՃԱՅԻ

Մ Ե Ր Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն

ՄԵՐ ՇՈՒԿԱՅ, ՈՍԿԵՐՉԱՅ ՄԵՐ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

Գոհարեղէններու իր մասնաւոր վաճառումէն զատ, այս անգամ քաջալերուած իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն, կը փութայ յայտարարել թէ՝

Զմրան յատուկ վերջին նորաձեւութեան վրայ՝ պատրաստ ունի ամէն տեսակ հագուստներ, արանց, կանանց և տղայաց համար, ճերմակեղէններ, ժանթեր, քոհաւիտներ, կահ կարսուի, ճեղուի լանկաներ, ժամացոյցներ, շորայներ, ինչպէս նաեւ գորգեր, մուշամաներ, պիսիֆէթներ, կռամօփօններ է՝ն վերջին կատարելութիւններով:

Միմիայն դնուած ապրանքին 20 % ը կանխիկ ըլլալու պայմանաւ, իսկ մնացեալ գումարին 5 % շարաթական վճարումով պատրաստ է հայթայթել:

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ ընդ միշտ պատրաստ են:

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքի մէջ միակն է որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը, իր ապրանքներու ՏՈՒՆՈՒԹԵԱՆ և ՈՍԿԻՆԵՐՈՒ ՄԱՔՐՈՒԹԵԱՆ, ԱԶՆՈՒՆՈՒԹԵԱՆ և ԱԺԱՆՈՒԹԵԱՆ մասին և նոյն իսկ՝

Ա Պ Ա Ռ Ի Կ

Անգամ մը այցելելը բաւական է, համոզուելու համար թէ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր էն դժուարահաճ յաճախորդները:

Կանխիկ գնողներու 5 % զեղջ:

50-2

ՍԱԿՍԱՐԿՈՒԹԻԻՆ ԶԻԿԱՅ